ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» փետրվարի 2016 թ. թիվ 01-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2016 թվականի գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի փետրվարի «08»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 10 30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » փետրվարի 2016 թ. թիվ 02-Ա

ՄԱՍԻՍ ԳԱԼՈՒՍՏԻ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ և 36-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումով, հիմք ընդունելով Լուսագյուղ համայնքի <<Խնամակալության և հոգաբարձության>> հանձնաժողովի 05.02-2016 թվականի թիվ 1 նիստի որոշումը և Մասիս Գալուստի Տերտերյանի 03.02-2016 թվականի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մասիս Գալուստի Տերտերյանին ծնված 21.08-1975 թվականին, անձնագիր՝ AM 0206375 խնամակալ սահմանել Անդրանիկ Գալուստի Տերտերյանին ծնված՝ 17.04-1967 թվականին, անձնագիր AF 0788231 տրված 057-ի կողմից:

2. Անդրանիկ Գալուստի Տերտերյանի պարտականությունների պատշաճ կատարման հսկողությունը վերապահել Արմեն Սիմոնյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ ---------- Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի փետրվարի «15»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 ^{00}

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» փետրվարի 2016 թ. թիվ 03-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 1-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի առաջին մասով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի փետրվարի 12-ի թիվ 01/07.1/535-16 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2009 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 01-Ա որոշման վերնագրում, տեքստում և հավելվածներում «գյուղապետարանի» բառը փոխարինել «համայնքապետարան» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ ---------- Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի փետրվարի «16»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 10 [30]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25» փետրվարի 2016 թ. թիվ 04-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 29-ի «Համայնքի մահացած բնակիչների ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին» 5-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի բնակիչ՝ Վազգեն Անտոնյանին մոր մահվան կապակցությամբ հատկացնել դրամական օգնություն՝ 40000 /քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ ---------- Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի փետրվարի «25»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 ^{00}